# ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏ

**21.11.2022 10:43**

***Հարգելի՜ փաստաբաններ,***

Տեղեկացնում ենք, որ Էկոնոմիկայի նախարարությունը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) հետ համատեղ իրականացնելու է Մտավոր սեփականության ոլորտի դասավանդողների վերապատրաստման ծրագիր:

Վերապատրաստումից հետո, դասավանդողները պետք է մշակեն Մտավոր սեփականության ոլորտի կրթական նյութեր Հայաստանի տարբեր կրթական, գիտական և մշակութային հաստատությունների, իրավապահ, դատական և պետական այլ մարմինների աշխատակիցների, և մասնավոր ոլորտի կազմակերպությունների վերապատրաստման համար:

Կից ներկայացվում
են ծրագրի մասնակցության պայմանները և հայտի ձևը: Այս փուլում իրականացվում է միայն նախնական ուսումնասիրություն գնահատելու համար, թե քանի հնարավոր թեկնածուներ կարող են
լինել ծրագրին մասնակցելու համար:

Հետաքրքրված բոլոր փաստաբաններին խնդրում ենք լրացնել կից հայտը և ներկայացնել հետևյալ
էլ-հասցեին sknyazyan@mineconomy.am: Լրացուցիչ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել հետևյալ
հեռախոսահամարով` (055) 511 103:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })